

ԳԱԳԻԿ ՍԵՐՅՈՒԺԱՅԻ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1961թ. ապրիլի 25-ին Երևանում:

1968-1978թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 84 միջնակարգ դպրոցում:

1978-1983թթ. ընդունվել և ավարտել է հայկական գյուղատնտեսական ինստիտուտի այգեպտղաբուծության ֆակուլտետը: Գիտնական ագրոնոմ է:

1984-1987թթ. սովորել է խաղողագործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում:

1983-1984թթ. աշխատել է Արզնու պտղաբուծության խորհունտեսությունում:

1987-1991թթ. աշխատել է խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտում որպես գիտաշխատող:

1993-1995թթ. ՀՀ պետական եկամուտների տեսչությունում եղել է ավագ օպերլիագոր:

1999թ.-ից աշխատում է որպես ազգային համակարգող <<Ազրոգիտասփյուռ>> դեպարտամենտում:

2000թ. եղել է առաջատար հետազոտող և համակարգող <<Կիրառական վարունգի փորձնական արտադրություն>>-ում. կիրառական ծրագիր, որը ֆինանսավորվել է ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի կողմից:

2001-2002թթ. եղել է հայկական գյուղատնտեսական ակադեմիայի հավատարմագրման հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը:

2002թ. եղել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտության, կրթության և խորհրդատվության վարչության պետ:

2005-2006թթ. եղել է ՀՊԱՀ հեռակա ուսուցման ընդունելությունը կազմակերպելու և անցկացնելու պատասխանատու քարտուղարը:

2006թ.-ից Հայաստանի պետական ագրարային համալսարանի ագրոնոմիական ֆակուլտետի դեկանն է:

1991թ.-ից ՀՊԱՀ-ի այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի ղոցեստ է:

2007 թվականից Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող <<Ֆերմերային դաշտային դպրոցների ստեղծում>> ծրագրի խորհրդատու է:

24 գիտական հոդվածների, դասագրքի, ուսումնամեթոդական ձեռնարկների և ցուցումների հեղինակ է:

2006թ.-ից <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության անդամ է, 2007 թ.-ից՝ քաղաքական խորհրդի անդամ:

2007թ. ՀՀ ԱԺ ընտրություններում եղել է պատգամավորության թեկնածու՝ համամասնական ցուցակով:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի 3 երեխա:

